ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Մարինա Կարենի Գալստյանի «ՀՀ երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաները հետպատերազմյան Հայաստանում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված ԻԲ.00.01 - «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման:

Աշխատանքի արդիականությունը.

Հետպատերազմյան իրավիճակը Հայաստանում լուրջ մարտահրավերներ է առաջացրել բոլոր ոլորտներում, այդ թվում՝ երիտասարդների սոցիալ-տնտեսական խնդիրների և նրանց քաղաքական ու քաղաքացիական կյանքում ներգրավվածության առումով: Այս համատեքստում Հայաստանի երիտասարդության ուսումնասիրությունները դառնում են չափազանց կարևոր՝ հատկապես ներկա բարդ և բազմաշերտ հասարակական փոփոխությունների պայմաններում, որոնք առաջացնում են հակասական միտումներ՝ կապված հանրային խնդիրներին՝ երիտասարդների արձագանքների հետ: Հեղինակը ուսումնասիրել է շատ արդիական թեմա. հետպատերազմյան Հայաստանում երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաների ուսումնասիրությունը կարևոր է մի շարք պատճառներով.

1. **Գիտական արդիականություն**. Երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաների ուսումնասիրությունը կարևոր է գիտական տեսանկյունից, քանի որ նման հետազոտությունները կարող են ոչ միայն լրացնել գիտական գիտելիքների պակասը, այլև կիրառական լինել այլ հետպատերազմյան հասարակություններում երիտասարդության հարմարման խնդիրները ուսումնասիրելու համար:
2. **Սոցիալ-տնտեսական մարտահրավերներ**. պատերազմից հետո շատ երիտասարդներ բախվում են գործազրկության, ֆինանսական դժվարությունների և ապագայի նկատմամբ անորոշության: Այս պայմաններում նրանց սոցիալական հարմարման մեխանիզմների ուսումնասիրությունը կօգնի բացահայտել, թե ինչ ռեսուրսներ են նրանք օգտագործում՝ վերականգնելու իրենց սոցիալական դիրքը և կայունությունը:
3. **Քաղաքական և քաղաքացիական ներգրավվածություն**. հետպատերազմյան պայմաններում երիտասարդների մասնակցությունն առավել կարևոր է հասարակական փոփոխությունների և զարգացման համար: Նրանց քաղաքական և քաղաքացիական ակտիվությունը կարող է մեծ ազդեցություն ունենալ քաղաքականության ձևավորման և փոփոխությունների վրա:

4. **Հոգեբանական վերականգնում**. պատերազմի ազդեցությունը երիտասարդների վրա ունի ոչ միայն ֆիզիկական, այլև հոգեբանական հետևանքներ, ինչպիսիք են տրավման, անհանգստությունն ու դեպրեսիան: Հարմարման պրակտիկաների ուսումնասիրությունը կարող է բացահայտել, թե ինչպիսին են նրանց մոտեցումները և մեթոդները՝ հաղթահարելու այդ խնդիրները:
5. **Հասարակական ներգրավվածություն և նորարարական մոտեցումներ**. երիտասարդները հաճախ հանդես են գալիս որպես հասարակական նորարարություններ ներմուծողներ: Նրանց արձագանքները հանրային խնդիրներին կարող են ընդգրկել նորարարական մոտեցումներ, որոնք կարող են նպաստել հետպատերազմյան հասարակության վերականգնմանը:

Այս ուսումնասիրությունը թույլ է տալիս հստակ հասկանալ հետպատերազմյան հայաստանյան երիտասարդների բնութագրիչների փոփոխությունները և նպաստել քաղաքականությունների մշակմանը, որոնք կաջակցեն նրանց սոցիալ-տնտեսական կայունացմանն ու հարմարվողականությանը:

Ատենախոսության նպատակն է՝ բացահայտել ՀՀ երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաները հետպատերազմյան իրականությունում:

Աշխատանքի գիտական նորույթների և եզրակացությունների հիմնավորումը

Գիտական աշխատանքում ստացված արդյունքների հիմնավորվածությունը պայմանավորված է հեղինակի առջև դրված խնդիրների լուծման համար կիրառված հետազոտական գիտական մեթոդների ընտրությամբ՝ կիրառվել են որակական և քանակական մեթոդներ, երկրորդային վերլուծություն, մանրամասն հիմնավորված է հետազոտության ընտրանքը, հավելվածում ներկայացված գործիքակազմը թույլ է տալիս եզրակացնել, որ կատարված հետազոտությունը իրականացվել է գիտական ընթացակարգերին համապատասխան:

Աշխատանքի ուժեղ կողմերից է նաև հետպատերազմյան հասարակությունների, երիտասարդների, սոցիալական հարմարման վերաբերյալ տեսական մեկնաբանումներին խորքային անդրադարձը, հետազոտական արդյունքների սինթեզը և վերլուծական տրամաբանությունը, ինչը հնարավորություն է տվել հեղինակին հասնել առաջադրված խնդիրներին:

Հեղինակը ուսումնասիրել է երիտասարդության սոցիոլոգիայի դասական և ժամանակակից հեղինակներին՝ Կ. Մանհայմ, Ու. Բեկ, Է. Գիդենս, Ջ. Արնեթ, Է. Ֆուռլոնգ, Ջ.Վին, Դ.Վուդման, Թ. Հարեվան, Ա. Մանզոնի և այլն, վերլուծել է սոցիալական հարմարման հոգեբանական, վարքաբանական, փիլիսոփայական, մշակութաբանական և սոցիոլոգիական մոտեցումները, սոցիալական հարմարման սահմանումները և տիպաբանությունը, հետպատերազմյան իրականությանը վերաբերող ուղենիշային գրականությունը՝ Մ. Պալմպերգեր, Ա. Հրոմաջիչ և այլն:

Կարևոր է նշել, որ հեղինակը անդրադարձել է նաև հայ հեղինակների, այդ թվում ժամանակակից:

Հեղինակին հաջողվել է բացահայտել և ներկայացնել գիտական նորույթ հանդիսացող կարևող դրույթներ՝ հետպատերազմյան հայաստանյան երիտասարդների սոցիալական հարմարման մարտահրավերները, երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաները, դրանց վրա ազդող հիմնական գործոնները, նախապատերազմյան և հետպատերազմյան երիտասարդների հիմնական բնութագրիչները, մշակել երիտասարդների անկախության համաթիվը՝ բաղկացած 4 ենթաբաղադրիչներից (ֆինանսական անկախություն, տնտեսական անկախություն, մտավոր և առօրյա ինքնուրույնություն), վերհանվել է երիտասարդների տիպաբանությունը՝ առանձնացնելով հայաստանյան երիտասարդների հինգ տիպեր, ինչպես նաև հետազոտական արդյունքների հիման վրա ներկայացնել երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված առաջարկներ:

Աշխատանքի գիտական նորույթներից կարելի է առանձնացնել՝

Բացահայտվել են հետպատերազմյան Հայաստանում երիտասարդների հիմնական բնութագրիչները և անկախության առանձնահատկությունները, սոցիալական հարմարման պրակտիկաների առանձնահատկությունները սոցիալ-տնտեսական, սոցիալ-քաղաքական և սոցիալ-մշակութային ոլորտներում,

Դուրս են բերվել հետպատերազմյան Հայաստանում երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաները,

Մշակվել է հայաստանյան երիտասարդության տիպաբանությունը՝ երիտասարդների անկախության համաթվի չափման մեթոդաբանության և սոցիալական հարմարման պրակտիկաների փոխառնչության վերլուծության միջոցով:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածական մասից, չորս գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածներից: Ընդհանուր ծավալը կազմում է 166 էջ:

Ներածության մեջ հեղինակը հիմնավորել է աշխատանքի արդիականությունը, ձևակերպել է աշխատանքի նպատակն ու խնդիրները, ատենախոսության թեմայի գիտական մշակվածության աստիճանը, այդ թվում առկա է անդրադարձ հայ հեղինակների, ներկայացրել է ատենախոսության տեսական և մեթոդաբանական հիմքերը, նկարագրել է հետազոտության մեթոդները, գիտական նորույթները, տեսական և գիտական նշանակությունը, ինչպես նաև աշխատանքի կառուցվածքը և ծավալը:

Առաջին գլխում հեղինակը ներկայացրել է հետպատերազմյան հասարակությունների վերաբերյալ սոցիոլոգիական մտքի առանձնահատկությունները՝ անդրադառնալով երիտասարդներին հիմնախնդիրներին:

Երկրորդ գլխում մանրամասն ուսումնասիրվել են երիտասարդության սոցիոլոգիայի ձևավորման և զարգացման նախադրյալները, երիտասարդության մեկնաբանման սոցիոլոգիական, հոգեբանական, վարքաբանական մոտեցումները,

ինչպես նաև հետպատերազմյան հայաստանյան երիտասարդների ընդհանուր բնութագիրը:

Երրորդ գլուխը նվիրված է սոցիալական հարմարման հիմնախնդրին: Հեղինակը ներկայացրել է սոցիալական հարմարման տեսական մեկնաբանումը, տիպաբանությունը և ուսումնասիրման առանձնահատկությունները:

Չորրորդ գլխում հեղինակը վերլուծել է հետպատերազմյան հայաստանյան երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաները, դրանց վրա ազդող գործոնները, ներկայացրել երիտասարդների անկախության չափման մոդել, ըստ հետազոտական տվյալների համադրական վերլուծության տվել երիտասարդների տիպաբանությունը՝ ընդգծելով անկախության գործոնի նշանակալի ազդեցությունը ակտիվ սոցիալական հարմարման վրա:

Օգտագործված գրականության ցանկում առկա է 143 աղբյուր՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներով:

Հավելվածում բերված են հետազոտության գործիքակազմը, հետազոտության մասնակցության համաձայնության թերթիկը:

Ատենախոսության վերաբերյալ կան հետևյալ **դիտողությունները և հարցադրումները**.

1. Աշխատանքում տեղ գտած որոշ անհատական հարցազրույցների և խմբային քննարկումների մեջբերումներում մասնակից երիտասարդները խոսել են ապագայի մասին, հետաքրքիր է պարզել հեղինակից՝ մասնակիցների համար արդյոք տրվել է ապագայի սահմանում:
2. Էջ 118-ում գրված է՝ «Հետպատերազմյան իրականությունում պետական ինստիտուտների հանդեպ վստահության ճգնաժամը հանգեցրեց պետության, պետական ինստիտուտների նկատմամբ վստահության պակասի, ինչը հանգեցրեց պետությունից երիտասարդների օտարմանը: Համադրելով այս հանգամանքը հետպատերազմյան հասարակությունների երիտասարդների հետ՝ կարող ենք հետպատերազմյան հայաստանյան երիտասարդների բնութագրիչներից համարել օտարվածությունը, ինչը լուրջ մարտահրավեր է քաղաքացիական մասնակցության, քաղաքացիական հասարակության կայացման ճանապարհին»: Հետաքրքիր կլիներ ծանոթանալ այս եզրահանգման հետ կապված հեղինակի հավելյալ հիմնավորմանը:
3. Ատենախոսության եզրակացությունները բաղկացած են բավական շատ ենթակետերից: Ցանկալի էր դրանք ներկայացնել ավելի հակիրճ:
4. Ատենախոսության ներկայացրած առաջարկությունները շատ կարևոր են և հիմնավոր, սակայն որոշ դեպքերում կարելի էր ավելի հստակ ներկայացնել դրանց գործնական կիրառելիությունը:

Նշված դիտողություններն ու առաջարկությունները չեն արժեզրկում աշխատանքի գիտական և գործնական արժեքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մարինա Կարենի Գալստյանի «ՀՀ երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաները հետպատերազմյան Հայաստանում» թեմայով ատենախոսությունը ավարտուն գիտական աշխատանք է, որում լուծված են գիտակիրառական կարևոր նշանակություն ունեցող խնդիրներ:

Ատենախոսության հիմնական դրույթները արդիական են և հրատարակված են 12 հոդվածներում հեղինակավոր գիտական տեղական և միջազգային ամսագրերում:

Ատենախոսության սեղմագիրը և տպագրված աշխատանքները լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Հաշվի առնելով շարադրվածը՝ գտնում եմ, որ Մարինա Կարենի Գալստյանի «ՀՀ երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաները հետպատերազմյան Հայաստանում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին: Հեղինակը արժանի է ԻԲ.00.01 - «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս,

սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող Ա. Կ. Սահակյան

Ա.Կ. Սահակյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտքարտուղար, արվ. թեկնած.

Ս. Թոնոյան

18.09.2024թ.